ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ Հեռ. 091407836
Էլ. հասցե. sh.doydoyan@icloud.com
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

09.09.2020
346-22

ՀՀ Կրթության տեսչական մարմնի
ղեկավար Ալեքսանդր Շագաֆյանին

**Տեղեկատվություն ստանալու հարցում**

Հարգելի պարոն Շագաֆյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2020թ. օգոստոսի 27-ին հարցում է ուղարկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարություն՝ նպատակ ունենալով ճշտել, թե ՀՀ դպրոցներից քանիսն են լիարժեք համապատասխանում Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման Ուղեցույցով սահմանված պայմաններին: Վերջինս 2020թ. սեպտեմբերի 7-ի գրությամբ տեղեկացրել է, որ Ուղեցույցով սահմանված կանոնների վերահսկողությունն իրականացնում է ՀՀ Կրթության տեսչական մարմինը և խորհուրդ տվել դիմել Ձեր ղեկավարած կառույց (պատասխան գրությունը կցվում է):

Ուստի, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություններ հետեւյալի մասին.

1. Արդյոք հանրակրթական պետական հաստատություններում և մասնավոր դպրոցներում նախնական դիտարկում իրականացվե՞լ է, ՀՀ դպրոցներից քանի՞սն են լիարժեք համապատասխանում Ուղեցույցում նշված պայմաններին:
2. Խնդրում ենք նշել այդ դպրոցների ցանկը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան